

Պօղոս պարք. ի կ'ընկերակցի եզրպտոս երթալու և հոն Ս. Յակոբի վանքին համար նպաստ հաւաքելու. այդ առթիւ Եռւսուֆեան Պօղոս Պէլի միջնորդութեամբ կը կարգուի Նարոլիի և Սարտենիոյ հիւպատոս Յոպպէի մէջ, ուր կը հաստատուի ընտանեօք: Մուրատ իշխան Ս. Յակոբի վանքին կը նուիրէ Յոպպէէ քիչ հետի իր ազարակը՝ ուր ունէր ընդարձակ գետին ու պարտէզ, երկու ջրհոր, տասնեութը քարուկիր սենեակներ: 1858ին Յովհաննէս պարք. տեսնելով նոյն ազարակին վրայ օտար զբայելներու ռանձգութիւններուն և այդ պատճառաւ շահագործումի անկարելիութիւնը, խորհրդակցութեամբ վանական ժողովի Հեօն-նիքը Շերիհով նոյն ազարակը կը փոխանակէ Երուսաղէմի մէջ Դամասկոսի դրան մօտ գտնուող տան մը հետ, որ կը պարունակէ երկու մաղազա, երեք ջրհոր, և փոքրիկ պարտէզ մը. կարգաւ այս մասին (Արծրունեան, էջ 31. նաև նաև. էջ 45-46): Մուրատ իշխան Ս. Յակոբի վանքին նուիրած է նաև Բեթղեհէմի մէջ Քառասնից այր կոչուած ուխտատեղիին մօտ գեղեցիկ տուն մը պարտէզով և ջրհորով: Մուրատ իշխանին Հեղինէ տիկինն ալ Ս. Յակոբի եկեղեցիին նուիրած է մարգարտայեռ և զոհարադարձ եւ պիսկոպոսական թագ մը, վահաս, և այլն: 1840ին Հեղինէ յիշատակ թողած է նաև ազամանդազարդ խաչ մը, ի յիշատակ իր հօրը՝ Պօտուռեան Կէորդի: Մուրատ իշխան 1842ին և կինը Հեղինէ 1845ին կը վախճանին Յոպպէի մէջ՝ անոնց մարմինը Երուսաղէմ կը փոխադրուի և կը թաղուին Երուսաղէմի Սիոնի գերեզմանատունը. հոս կը դնենք տապանագիրները:

«Այս է տապան հանգստեան Իգմիրցի Մահտեսի Յակոբայ Յարութեանց երեց որդի զոնցոյ բարեհամբաւ մահտեսի Մուրատ աղային որ Յոպպէ վախճանեալ այսր բերեալ թաղեցաւ յամի տեառն 1842»:

*

«Ի Յոպպէ աստ փոխադրի Մարմին տիկնոջ մեծ իշխանի Զմիւռնիացի Մուրատ Պէլի Դուստր Գէորդ Պօտուռեանի: 1845 Մայիս 10»

Մուրատ իշխանի և իր պարագաներուն համար 1845ին կը հաստատուի մշտնջենական յիշատակարան մը, Զաքարիա պա-